

**ԱՐԻՍՏՈՏԵԼԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ «ՅԱՂԱԳՍ
ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՉԱՐՈՒԹԵԱՆՑ»
ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝**

Մանե (Էռնա) Շիրինյան

«Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց»² (Περὶ ἀρετῶν καὶ κακιῶν, լատ.՝ De virtutibus et vitiis) հունարեն բնագիրը փոքրածավալ մի գրվածք է: Այն ավանդված է Արիստոտելի ստեղծագործությունների հավաքածուում, ինչպես նաև Ստոբեոսի և Կեղծ Անդրոնիկոսի վերամշակումներում և մեզ է հասել բազում ձեռագրերով: Թերևս այս է պատճառը, որ մարդկությանը որպես բարոյագիտության ձեռնարկ դարեր շարունակ ծառայած այս երկը վերագրվել է Արիստոտելին: Մասնագետները, սակայն, վաղուց ի վեր ապացուցել են³, որ այն չի պատկանում մեծ փիլի-

Հոդվածը ներկայացվել է 14.01.2019 թ., գրախոսվել է 19.02.2019 թ., ընդունվել է տպագրության 21.06.2019 է.:

- ¹ Հոդվածը հրատարակվում է «Դրուագներ հայ աստուածաբանական մտքի պատմությանից» թեմայի շրջանակում՝ 18T-6D342 ծածկագրով:
- ² Սույն հոդվածը կարող է ուսումնական նյութ ծառայել Աստվածաբանության ֆակուլտետի ուսանողների համար քրիստոնեական բարոյագիտություն, էկզեգետիկա, «նուրբ գրեանց» և մի շարք այլ հարցեր ուսումնասիրելիս: Տարիներ առաջ ես պատրաստել եմ «Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» հայերեն թարգմանության քննական բնագիրը, որը հունարեն բնագրի և արաբերեն թարգմանության հետ՝ Դ. Հատչինսոնի (անտիկ փիլիսոփայությամբ, մասնավորապես Պլատոնի ժառանգությամբ զբաղվող մասնագետ) հետ ուզում էինք հրատարակել, սակայն ինչ-ինչ պատճառներով այս նախաձեռնությունը հետաձգվեց: Այնուամենայնիվ իմ աշխատանքներում կամ այս հարցին նվիրված հատուկ հոդվածներում (օրինակ՝ Armenian Translation of [Aristotle's] "De Vitiis et Virtutibus". - Verbum: Аристотель и средневековая метафизика, выпуск 6, Sankt-Peterburg 2002, pp. 166-171) բազմիցս անդրադարձել եմ այս երկին:
- ³ Դեռևս ԺՁ դարից այս երկի վավերականության հարցը կասկած էր հարուցում, տե՛ս Cacouros, M. "Le traité pseudo-aristotélicien De virtutibus et vitiis, Dictionnaire de la Philosophie antique: vol. Supplément, Paris, 2003, p. 516: Իրականում այս գրվածքն այդքան էլ լավ ուսումնասիրված չէ: Այս գրվածքի թվագրման, հեղինակային պատկանելիության, ինչպես նաև այլ հարցերի վերաբերյալ որոշիչ նշանակություն ունեն հետևյալ ուսումնասիրությունները. Schuchhardt, C. Andronici qui fertur libelli "Περὶ παθῶν" pars altera "De virtutibus et vitiis". Darmstadt: Winter, 1883; Schmidt, E. A. Aristoteles, Über die Tugend. Übersetzt von Ernst A. Schmidt// Aristoteles: Werke in

սովայի գրչին և պարզապես կազմված է մ.թ.ա. կամ մ. թ. առաջին դարերում՝ Արիստոտելի հետևորդների մեկի կողմից, որոնք բազմաթիվ էին այդ ժամանակաշրջանում¹: Առկա են նաև գիտնականներ, որոնք համարում են, որ «Յաղագս առաքինությանց եւ չարութեանց»-ը չի կարող դասվել որպես փիլիսոփայության կամ բարոյական փիլիսոփայության բնագավառներին պատկանող երկ, քանի որ դրանում չկա և ոչ մի պատճառ-փաստարկային գործընթաց, զարգացում: Այն սուկ առաքինությունների և «չարությունների» (մեղքերի կամ թերությունների, արատների) հավաքումն է քաղած տարբեր աղբյուրներից (հիմնականում Արիստոտելի բարոյագիտական գրվածքներից), որը շարադրված է դասակարգված, մատչելի ձևով: Ընդօրինակված այս գրքուկը, այնուամենայնիվ, լայն շրջանառություն է ունեցել միջին դարերում և անգամ թարգմանվել լատիներեն, հայերեն, արաբերեն, նորհունարեն, ինչը ևս փաստում է, որ այն արժեքավոր դասագիրք է եղել առաքինությունների ուսուցման գոր-

deutscher Übersetzung; 18.1. – Darmstadt: Wissenschaftliche Buchgesellschaft, 1965; Susemihl F. ed., Aristotle. Magna moralia. Vol. 18 (ed. G.C. Armstrong). Cambridge, Mass.: Harvard University Press, 1935 (repr. 1969); E. Zeller, Die Philosophie der Griechen in ihrer geschichtlichen Entwicklung, T. III, Abt. 1, Leipzig 1923: Ուրախալի է նաև, որ վերջերս Ռուսաստանի դաշնության երկու երիտասարդ գիտնական իրենց ուշադրությունն են դարձրել այս աշխատությանը և հետաքրքրական հրապարակումներով հանդես եկել: Холодов Е. В. Четыре добродетели души, их роль в этике и теологии античного и позднеантичного платонизма (от Платона до Ямвлиха), М.: Православный Свято-Тихоновский гуманитарный университет (ПСТГУ), 2015. — 129 с.; Санжениаков А. А., Трактат "О добродетелях и пороках" (перевод и комментарий), СХОАН. Философское антиковедение и классическая традиция, том 10 (2), Новосибирск, 2016, с 754-777:

¹ Ինչպես համարում են մասնագետներն այս երկը կարող է նաև գրված լինել Պլատոնի հետևորդների կողմից, որոնք քանակով չէին զիջում առաջիններին, մանավանդ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ գրվածքում ոչ պակաս են կամ ճիշտ կլինի ասել՝ ավելի շատ են պլատոնական գաղափարախոսության տարրերը, օրինակ հենց չորս առաքինությունները կամ Պլատոնի հոգու եռամասնյա տեսությունը (թեև պետք է նշել, որ այդ տեսության հետ համաձայն էր նաև Արիստոտելը, ինչի մասին պարզորոշ ասում է «Հոգու մասին» իր գրվածքում): Այստեղ, թերևս, կարելի է մեկ այլ վարկած առաջարկել, համաձայն որի խնդրո առարկա գործը գրվել է ոչ թե այս երկու հանրահայտ փիլիսոփաների որևէ հետևորդի կողմից, այլ ոչ փիլիսոփա մի հեղինակի ձեռքով, որը պարզապես հավաքել և դասակարգել էր առաքինությունները տարբեր երկերից՝ ստեղծելով մի բարոյագիտության հավաքածու-ձեռնարկ, թերևս ուսումնական նպատակներով, ինչպիսին և եղել է այս գրվածքը դարերի ընթացքում:

ծում:

[Արիստոտելի]¹ «Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» երկը հայերեն է թարգմանվել թերևս 2 դարում, ի թիվս մի շարք այլ փիլիսոփայական բնույթ ունեցող գործերի: Թարգմանությունը հունարեն է, այսինքն՝ կատարված է տառացի, բառացի եղանակով, ինչը մեծապես նպաստում է ոչ միայն սկզբնական բնագրի՝ մասնավորապես աղճատված հատվածների վերականգնմանը և հունարեն տեքստի քննական բնագրի պատրաստմանը, այլև այդ բնագրի պատմության ճիշտ ընկալմանը²:

«Յաղագս առաքինութեանց» հայերեն թարգմանությունը հունարեն բնագրի համեմատ մեզ է հասել էլ ավելի բազմաթիվ ձեռագրերով՝ մոտ 125 միավոր, որոնք պահվում էին Մաշտոցի Մատենադարանում և աշխարհի գրադարաններում ու ձեռագրատներում³: Գրեթե նույնքան գրչագրեր են հայտնի, որոնք պարունակում են «Յաղագս առաքինութեանց» մեկնությունները⁴: Ձեռագրերի նման քանակը զարմանալի և խոսուն փաստ է. նախ հիշենք, թե ի թիվս բազում մարդկային զոհերի և մշակութային արժեքների ոչնչացման որքան շատ ձեռագրեր են կորել, այրվել⁵, գերեվարվել: Երկրորդ. երկի ձեռագրերի առկայության մեծաքանակությունը փաստում է, որ խնդրո առարկա գրվածքը չափազանց տարածված է եղել մեզանում, և, թերևս, որպես դասագիրք է օգտագործվել

¹ Քանի որ նշվեց, որ գրվածքը թյուրիմացաբար է վերագրվել Արիստոտելին հետագա շարադրանքում՝ երկի հեղինակի մասին խոսելիս, նրա անունը կփոխանցենք քառակուսի փակագծերում [Արիստոտելի]:

² Armenian Translation of [Aristotle's] "De Vitiis et Virtutibus", pp. 166-171.

³ Այս գրչագրերի հիմնական մասը 17-րդ դարից է պահպանվել ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջ:

⁴ Հայտնի են Գրիգոր Տաթևացու («Նորին Գրիգորի աշակերտի Հովաննու Մեծի Համառոտ լուծումն Առաքինութեանց Արիստոտելի») և Մովսեսի («Արիստոտելի Յաղագս Առաքինութեանց ի բնաբանէն եւ ի Լուծմանցն առեալ եւ ի միասին եղեալ վասն մտաւորութեան՝ ի մեղսամած Մովսիսէ») մեկնությունները: Հարկ է նաև նշել, որ հաճախ այս գրվածքից կամ դրա մեկնությունից հետո հայերեն ձեռագրերում կցվում է դոքսոգրաֆիկ բնույթի փոքրածավալ մի գործ կամ տեղեկություն՝ «Նկատումն Արիստոտելի» խորագրի ներքո: Ամենայն հավանականությամբ այն թարգմանված է հունարենից, սակայն դրա համարժեքը մեզ հասած հունարեն բնագրերի թվում անհայտ է:

⁵ Այս առումով չափազանց տպավորիչ և զարհուրելի է Բաղաբերդի վրա հարձակման պատճառով, ի թիվս այլ ավերումների, 10 000 հազար ձեռագիր այրելու փաստը:

դպրոցներում, համալսարաններում և այլուր: Իսկ մեկնությունների հարուստ ավանդույթի գոյությունն ապացուցում է, որ «Յաղագս առաքինութեանց»-ը գիտնական մարդկանց հետաքրքրությունն է շարժել և եղել է մեր վարդապետների ուշադրության կենտրոնում:

Հարկ է նաև նշել, որ այս գրվածքը ներգրավված է ինչպես «արտաքին գրեանց»¹, այնպես էլ «նուրբ գրեանց»² ցանկերում, որոնցում ներառ-

¹ Այն որ այս գրվածքը ներգրավված էր այսպես կոչված «արտաքին գրեանք»-ի ցանկում, որոնք ընդգրկված էին հայկական միջնադարյան համալսարանների ծրագրերում՝ ևս փաստում է առ այն, որ «Յաղագս առաքինութեանց» երկն օգտագործել որպես դասագիրք: Ավելի մանրամասն «արտաքին գրեանց» վերաբերյալ տե՛ս՝ Շիրինյան Է. Մ., «Արտաքին» և «նուրբ գրեանք», Աշտանակ Բ (1998), էջ 15-45, Շիրինյան Է. Մ., Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը. հայկական և հունական՝ դասական և բյուզանդական, աղբյուրների բաղադրությամբ, Երևան 2005, էջ 188-225, M.E. SHIRINIAN, Philo and the Book of Causes by Grigor Abasean, pp. 155-189 in: Studies on the Ancient Armenian Versions of Philo's Works, ed. By S. Mancini Lombardi & P. Pontani, Brill, Leiden – Boston 2011, p. 160, Շիրինյան Է. Մ., Աստվածաբանությունը և մեկնությունը, Տարեգիրք ԺԲ, ԵՊՀ Աստվածաբանության ֆ-տ, Երևան 2017, էջ 18-20: Այստեղ մեջբերենք ևս մեկ՝ դեռևս չվկայակոչված «արտաքին գրեանք»-ի սահմանում «Գիրք պատճառացից», Մաշտոցի անվան Մատենադարանի (այսուհետև՝ ՄՄ), թիվ 1879, 273ա. - «Արտաքուստ գիտութիւն» զայն ասէ, որ գրովք վարժին, զոր բանիւք միայն ցուցանէ զգիտութիւն, իսկ յորժամ աստուածային շնորհքն ի ներքս մտանէ յայտնի ցուցանէ՝ ոչ բանիւք միայն, այլ եւ արդեամբք»:

² Այս եզրին բազմիցս անդրադարձել ենք հետևյալ աշխատություններում. Շիրինյան, «Արտաքին» և «նուրբ» գրեանք, էջ 15-45, Շիրինյան, Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում, Աշտանակ Գ (2000), էջ 36-64, Երևան, Շիրինյան Է. Մ., Հայոց գրերի գյուտն ըստ Գիրք պատճառացի-ի, էջմիածին, Է-Ը, 2004, էջ 86-91, Շիրինյան, Քրիստոնեական վարդապետության անտիկ և հելլենիստական տարրերը, էջ 188-285, Ширинян М. Э., Армянская «Книга причин», составленная Григором, сыном Абаса. Армянский Гуманитарный Вестник Москва/Ереван 2006, сс. 103-109; Ширинян М. Э., Григор, сын Абаса, Православная Энциклопедия, Москва, 2006, Т. XIII, С. 108-109; M.E. SHIRINIAN, A Comparative Analysis of some technical terms in Armenian Sources, *Christianskij Vostok* 4 (X), S. Petersburg- Moscow 2006, pp. 268-316; Շիրինյան Է. Մ., Ղևտական գրքի մեկնությունն ըստ Գիրք Պատճառացի-ի, Տարեգիրք Դ, ԵՊՀ Աստվածաբանության ֆ-տ, Երևան 2009, 78-94, Շիրինյան Է. Մ., Գիրք պատճառաց, Գոհար Խաչատրյանի համահեղինակությամբ, Աշտանակ Դ, էջ 14-24, Երևան, 2011, M.E. SHIRINIAN, Philo and the Book of Causes by Grigor Abasean, p. 160-161, Շիրինյան Է. Մ., «Գիտութիւն գրոց»-ը միջնադարյան Հայաստանում («Անկանոն, արտաքին և նուրբ գրեանք»), Տարեգիրք Ժ, ԵՊՀ Աստվածաբանության ֆ-տ, Երևան 2015, էջ 47-

ված ստեղծագործությունները ներկայացված են հստակ հաջորդականությամբ¹: Ձեռագրերում «Յաղագս առաքինութեանց»-ը, հիմնականում, զետեղված է փիլիսոփայական երկեր պարունակող ժողովածուներում: Որպես կանոն, խնդրո առարկա գրվածքի հետ գրեթե մշտապես հանդիպում է նույնպես Արիստոտելին վերագրվող «Յաղագս աշխարհի» երկի հայերեն թարգմանությունը: Երկուսն էլ, գրեթե բոլոր ձեռագրերում, ներկայացված են նաև «Առ Աղէքսանդրոս թագաւոր» ենթավերնագրով²: Ընդհանրապես, գրչագրերում «Յաղագս առաքինութեանց»-ը տեղադրված է հավաքածուների վերջում՝ «Յաղագս աշխարհի» երկից հետո: Սա, իհարկե, պատահականություն չէ, քանզի հայտնի է, որ քննարկվող այս երկու գործերն էլ ներգրավված էին այսպես կոչված «նուրբ գրեանք»-ի շարքում, որոնք, ինչպես նշեցինք ներկայացված են հստակ հաջորդականությամբ:

«Յաղագս առաքինութեանց» գրվածքի ներգրավումը «նուրբ գրեանք» ցանկում հնարավոր է բացատրել հետևյալ պատճառներով. ա) քանզի այն ընկալվել է որպես փիլիսոփայական երկ և վերագրվել է Արիստոտելին, բ) գրվածքում առկա են և՛ աստվածաբանության, և՛ փիլիսոփայության տարրեր (ինչը, ըստ իս, բնորոշ է հենց «նուրբ գրեանք» կոչված երկերին):

«Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» հայերեն թարգմանության առաջին հրատարակությունն իրականացրել է 1704 թ. Ամստերդա-

48, ծն. 2, M.E. SHIRINIAN, THE LIBER CAUSARUM: A MEDIAEVAL ARMENIAN ISAGOGICAL COLLECTION, Le Muséon, 130 (1-2), 2017, PP. 139-176, Շիրինյան, Աստվածաբանությունը և մեկնությունը, էջ 14-17:

¹ Անասյան Հ., Հայկական Մատենագիտություն, Երևան, 1959, հտ. Ա, էջ XLI-XLIII: Հարկ է ուշադրություն դարձնել, որ այստեղ ներկայացված վերջին՝ համառոտ ցուցակը տարբերվում է նախորդից և մի շարք գրվածքներ՝ այդ թվում նաև «Յաղագս առաքինութեանց»-ը բացակայում է այդտեղ: Հետաքրքրական է նաև ցուցակի վերնագիրը. «Արտաքին գրեանք, որ ի դաս մտանեն», սակայն Հ. Անասյանը՝ ինչ-ինչ պատճառներով, ներկայացրել է այն որպես «նրբերի» ցուցակ:

² Միևնույն ժամանակ ձեռագրերից շատերում վերնագրի վերջին մասը՝ «...եւ չարութեանց»-ը բացակայում է, պարզապես գրված է. «Արիստոտելի Յաղագս առաքինութեանց առ Աղէքսանդրոս թագաւոր»:

մում Ղուկաս Վանանդեցին¹: Այս գրքի վերնագիրն է. «Արիստոտելի *Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց*, ըստ կարի ի բուն յոյն օրինակէ գաղափարեալ եւ կարգադրեալ յումեմնէ ապիկար դպրէ Վանանդեցոյ»: Այն իր հերթին ներգրավված է «Յոգնադիմի աստուածաբանական, բարոյական եւ քաղաքական իրողութեանց սահմանք» ժողովածուի մեջ:²

Ղուկաս Վանանդեցու այս հրատարակությունն առանձնահատուկ նշանակություն ունի, քանի որ այստեղ ներկայացրած թարգմանությունը տարբերվում է բազում ձեռագրերում ավանդված հայերեն հունաբան տեքստից: Երբ 125 մեզ հասած ձեռագրից՝ 121 գրչագիր համեմատելուց հետո, անդրադարձա Մաշտոցի անվ. Մատենադարանի թիվ 1974 ձեռագրին, բաղդատման արդյունքները պարզապես ապշեցուցիչ էին, որովհետև այդ օրինակը շատ տարբերվում էր մյուսներից: Կարելի էր անգամ ենթադրել, որ մեզանում առկա է եղել մեկ այլ թարգմանություն, որը սերել է Ստոբեոսի և Անդրոնիկոսի վերամշակումներից, որոնց հետ համընկնում էին որոշ տարրնթերցումներ: Հետագա աշխատանքի՝ հունարեն բնագրի, հայերեն հունաբան թարգմանության և այս գրչագրում ներկայացվածի տարրնթերցումների մանրակրկիտ բաղդատման արդյունքում, հասկացա, որ երբ 1760 թ. վարդապետ Գալուստ Զուղայեցին գրել է ձեռագիրն³, ձեռքի տակ է ունեցել նաև Ղուկաս Վանանդեցու հրատարակությունը. բաղդատելով այն ավանդական թարգմանության հետ և նկատելով եղած տարբերությունները, որոշել է միաձուլել դրանք: Նման խմբագրման մասին ոչինչ չի ասվում ձեռագրում առկա և ոչ մի հիշատակարանում:

¹ Այս հրատարակության մանրամասները տե՛ս է. Մ. Շիրինյան, «Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» երկի հայերեն թարգմանության առաջին՝ ամստերդամյան հրատարակությունը, *Tribute to Anahide Ter-Minassian*, Paris, 2019 (հանձնված է տպագրության):

² **Ղուկաս Վանանդեցի**, «Յոգնադիմի աստուածաբանական, բարոյական եւ քաղաքական իրողութեանց սահմանք», Ամստերդամ, 1704 թ., էջ 45-58:

³ ՄՄ, թիվ 1974, 189ա-90բ. «Արիստոտելի Յաղագս առաքինութեանց առ Աղէքսանդր թագաւորին» գրեաց այսպէս արդար, եւ ասէ. «Գովելի են գեղեցիքն եւ պարսաւելի զարշելիքն...»: Հիշատակարաններից մեկում կարդում ենք. «... յուսամ առ ամենագոր Բարերարն, զի բարերարութեամբ իրով օգնական լինի զիս մարդասիրութեամբն, որ զայս հասուցանեմ ի յաւարտ յամի Տեառն 1760՝ ի յԱշտարխան քաղաքի», այսինքն՝ Ղուկաս Վանանդեցու հրատարակությունը կարդում էին նաև Աստրախանում:

Ինչ վերաբերում է Ղուկաս Վանանդեցուն, ապա հնարավոր է ենթադրել, որ նա ձեռքին ունեցել է մի հունարեն գրչագիր կամ ավելի հավանական է տպագիր օրինակ (հայտնի է, որ Արիստոտելին վերագրվող «Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» հունարեն բնագրի առաջին հրատարակությունն արդեն առկա էր 1539 թ.), որը սերում էր ձեռագրերի այլ խմբից, քան այն որից կատարված էր մեր հունաբան թարգմանությունը: Մանրակրկիտ համեմատությունը պարզորոշ է դարձնում, որ իրականում Ղուկաս Վանանդեցին հիմնականում հետևում է հին հայերեն թարգմանությանը, այսինքն՝ նա ոչ թե թարգմանել, այլ խմբագրել է հին հայերեն թարգմանությունը: Թերևս Ղուկաս Վանանդեցին հենց ինքն է փաստում այդ մասին, երբ գրվածքի վերնագրում ասում է. «...ըստ կարի ի բուն յոյն օրինակէ գաղափարեալ եւ կարգադրեալ յումեմնէ ապիկար դարէ Վանանդեցւոյ»¹:

Ղուկաս Վանանդեցուց հետո գրվածքը գրեթե չէ ուսումնասիրվել. միայն երկու դար անց՝ ԺԹ դարի վերջում, այն հրատարակել են մխիթարյան հայրերը, որից հետո մոտավորապես կես դար անց «Յաղագս առաքինութեանց»-ը վերահրատարակվել է նույն հայրերի կողմից²: Հարկ է նշել, որ այդ հրատարակություններում ներկայացված բնագիրը զուտ հունաբան թարգմանությունն է՝ առանց Ղուկաս Վանանդեցու ընդմիջարկումների, հավելումների, ուղղումների կամ խմբագրումների և այդտեղ այն ներգրավված է որպես Դավիթ Անհաղթի ժառանգության մի մաս:

Իսկ ինչո՞ւ է այդքան հետաքրքրել քրիստոնյա հայերիս և ինչո՞ւ է մեզանում այդքան կարևորվել այս փոքրիկ «արտաքին» գրվածքը:

Նախ, առաքինությունները արդար և առողջ վարքուբարքի՝ բարին գործելու և չարից խորշելու, հոգու կամ անձի կենսական, առաջնակարգ հատկանիշներն են, որոնք գործել են բոլոր ժամանակներում, բոլոր ազգերի համար: Հնարավոր է, որ մարդկության պատմության ընթացքում, այս կամ այն ազգի պարագայում՝ ազգային կամ նրանց բնորոշ կենցա-

¹ Նույն տեղում, էջ 45:

² Կորին վարդապետի, Մամբրէի Վերծանողի և Դավթի Անյաղթի մատենագրութիւնք. Վենետիկ, 1833, էջ 629-635, Դավթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրութիւնք և թուղթք Գիտայ կաթողիկոսի առ Դավթ, երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, 1932, 543-549:

ղավարության առանձնահատկությունների պատճառով, ետ ու առաջ է տարվել այս կամ այն առաքինությունը, փոխվել են դրանց անվանումները, թիվը կամ ընդհանրապես՝ արժեքների վերարժևորման արդյունքում, դուրս են մղվել դրանցից մի քանիսը կամ մեկը: Որպես կանոն, սակայն, բարուն և չարին բնորոշ արտահայտությունները զարգացած մարդկության համար գրեթե նույնն է մնացել, և հենց այդ է պատճառը, որ տարբեր քաղաքակրթություններ մշակել են առաքինությունների գրեթե միևնույն համակարգ, որով առաջնորդվել են դարեր շարունակ: Այսպես, արդեն մ.թ.ա. 6-5-րդ դդ.՝ անտիկ շրջանի դասական ժամանակաշրջանում, Էսքիլեսը բոլոր առաքինություններից առանձնացրել էր չորսը՝ արդարություն, արիություն, ողջախոհություն, խոհեմություն: Անվանումների կամ հաջորդականության աննշան փոփոխությամբ հետագայում դրանք զարգացվեցին Պլատոնի (5-րդ-4-րդ դդ.), Արիստոտելի (4-րդ դ.) և ստոիկների կողմից, դառնալով անտիկ բարոյագիտության հիմնարար, ընդհանուր, առանցքային առաքինությունները:

Քրիստոնեության շրջանում առաքինությունները և դրանց ուսումնասիրումն աստվածաբանության առաջնակարգ հարցերից էին, քանզի սերտորեն կապված են Հիսուս Քրիստոսի բարոյագիտական վսեմ, խոր և մաքուր վարդապետության հետ: Քրիստոնեաների համար առաքինությունները մարդու պարզապես դրական հատկությունների ամբողջականություն չէին, այլ աստվածային շնորհ էին, որոնք օգնում էին քրիստոնյային մտքով, խոսքով և գործով չմեղանչել, ապրել քրիստոնեական հոգևոր սկզբունքներով, գործել Աստծո պատվիրաններին համաձայն՝ փորձելով նմանվել Տիրոջը: Առաքինությունները նաև Քրիստոսի ճշմարիտ և ուղղափառ հավատի արգասիքն են:

Բացի արդեն առկա չորս հիմնական առաքինություններից քրիստոնյա վարդապետներն ավելացրեցին ևս երեք աստվածաբանական կամ քրիստոնեական առաքինություններ. հավատ, հույս, սեր: Այսպիսով՝ սկսած քրիստոնեական շրջանից, առաքինությունների թիվը դարձավ յո-

¹ Պարզ է, որ ոչ համակարգված վիճակում այս առաքինությունների մասին խոսվել է հին հունական ավելի վաղ գրականության մեջ՝ Հոմերոսի (մ. թ. ա. ԺԲ-Է դդ.), Հեսիոդեսի (մ. թ. ա. Ը դ. վերջ – Է դ. սկիզբ), յոթ իմաստունների (մ. թ. ա. Է-Ձ դդ.), Հերակլիտեսի (մ. թ. ա. 544-483 թթ.), Պյութագորասի (մ. թ. ա. 580-500 թթ.), Սոկրատեսի (մ. թ. ա. 470/469-399 թթ.) և այլոց գրվածքներում:

թը՝ ի հակադրություն յոթ մեղքերի:

Հին և Նոր կտակարաններում բազմաթիվ են առաքինությունների վկայակոչումները: Առաքինություններին վերաբերող հարցերով է զբաղվում *քրիստոնեական բարոյագիտությունը*. Եթե անտիկ *բարոյագիտությունն* առաջնային էր համարում արդարությունը, ապա *քրիստոնեական բարոյագիտության* համար առաջին տեղում էր սերն առ Աստված և առ մերձավորս:

Հետաքրքրական է նկատել, որ աստվածաբանական առաքինությունները մեկնաբանելիս՝ թեպետև քրիստոնյա եկեղեցիների մեկնարկման կետը նույնն է (այս դեպքում, Նոր Կտակարանն է) արևմտյան (կաթոլիկ, բողոքական), ուղղափառ և արևելյան աստվածաբանները հաճախ տարբեր մեկնաբանություններ են տալիս:

Հայաստանում օգտագործվել են և՛ ընդհանուր, և՛ աստվածաբանական առաքինությունները և զարմանալիորեն հայկական աղբյուրներում «արտաքին» աղբյուրներից սերող՝ ընդհանուր առաքինություններին մեծ տեղ է հատկացվել:

Այս մասին է վկայում նաև այստեղ քննարկվող երկը: «Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» գրվածքն սկսվում է երկու ներհակ գաղափարների՝ գեղեցիկի և գարշելիի հակադրությամբ՝ նշելով, որ գեղեցիկը գովելի է, իսկ գարշելին՝ պարսավելի: Գեղեցիկի ու գարշելիի հետ համապատասխանաբար կապվում են առաքինություններն ու «չարությունները» (49a26-49a31): Եվ հետո հեղինակն սկսում է առանձին քննարկել յուրաքանչյուր «առաքինութիւնն» ու «չարութիւնը»: Սկզբում ընդհանուր ձևով ներկայացված են առաքինությունները, իսկ հետո՝ դրանց հակադրված «չարությունները» (մեղքերը, թերությունները, արատները): Հետագա շարադրանքի ընթացքում յուրաքանչյուր առաքինություն և «չարություն» քննված է ավելի մանրամասնորեն. դրանք համակարգված են և դրանց հարակից անվանումները ևս ներգրավված են: Հետաքրքրական է նշել, որ այս գրվածքում փաստորեն օգտագործված է անտիկ և ուշ անտիկ փիլիսոփայությանը բնորոշ հակադրությունների միասնության տեսությունը: Էլ ավելի ուշագրավ է այստեղ Պլատոնի հոգու եռամասնյա կառուցվածքի տեսության կիրառումը.

49a31-50a1 Այլ եռամասնեայ անձինն¹ առնլով ըստ Պլատոնի բանականին առաքինություն ` խոհեմություն է, իսկ ցասմնատեսակին՝ հեզությունն է և արիություն, իսկ ցանկականին՝ ողջախոհությունն և ժուժկալություն. և բոլոր անձինն՝ արդարություն, և ազատականությունն, և մեծահոգողությունն: Իսկ չարություն է բանականին՝ անզգամություն: Զի՞նչ է չարություն ցասմնատեսակին: Եւ ցասմնատեսակին՝ բարկացողություն և զանգիտություն: Զի՞նչ է չարություն ցանկականին: Եւ ցանկականին՝ զեղխություն և շռայլություն: Զի՞նչ է չարություն բոլոր անձինն: Եւ բոլոր անձինն՝ անիրատություն, և անազատականություն, և փոքրահոգողություն²:

Այսինքն՝ հոգու երեք մասերից ամեն մեկն ունի իր առաքինությունը՝ բանական մասի համար խոհեմությունն է, ցասմնականինը (կամ զայրացական)՝ հեզությունն ու արիությունը, ցանկականինը՝ ողջախոհությունն ու ժուժկալությունը, իսկ ամբողջ հոգու համար՝ արդարությունը, ազատականությունը և մեծահոգողությունը: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույն առաքինությունը մեկ անվանումով չէ ներկայացված, այլ բերված են միևնույն առաքինության դարերի ընթացքում ստացած տարբեր անվանումներ-հոմանիշները:

Իրականում սրանք Պլատոնի հոգու եռամասնյա կառուցվածքի տեսությունում ավանդված, դարերի ընթացքում դասական և գերիշխող դարձած՝ նույն չորս առաքինություններն են: Ըստ այդ տեսության խոհեմությունը՝ հոգու բանական մասինն է, արիությունը՝ ցասմնական, ողջախոհությունը՝ ցանկական, իսկ արդարությունը՝ միացնելով հոգու բոլոր երեք մասերը հավասարակշռում է դրանք, որպեսզի յուրաքանչյուրը մասը կատարի այն, ինչը սահմանված է իրեն: Այսպիսով, հոգու մեջ տիրում է ներդաշնակություն և կանոնավոր կարգավորում: Իր տրամախոսություններում Պլատոնը խնդրո առարկա տեսությունը հետաքրքրական համեմատականներով է բացատրում: Մասնավորապես «Պետություն» տրամախոսության չորրորդ գրքում նա բաղդատում է հոգին պետության

¹ «Անձ» բառի իմաստներից մեկն է «հոգի»-ն, և այստեղ պետք է հասկանալ հենց այդ իմաստով:

² Դալթի Անյաղթ փիլիսոփայի մատենագրությունք և թուղթք Գիտայ կաթողիկոսի առ Դալթ, երկրորդ տպագրություն, Վենետիկ, 1932, էջ 543:

հետ: Վերջինս՝ հոգու օրինակով ևս բաժանված է երեք մասերի՝ ղեկավարների, արհեստավորների և ռազմիկների և պետությունը որպես ժողովրդի հոգի միավորում է բոլորին՝ ապահովելով ներդաշնակ ու օրենքներով կարգավորված կյանք:

Պլատոնի այս տեսությունը լայնորեն կիրառված է նաև հայ մատենագրության մեջ՝ ըստ որում թե՛ թարգմանական, թե՛ ինքնուրույն աղբյուրներում: Եվ ինչպես նշվեց վերը, հայ ավանդության մեջ նույնպես միևնույն առաքինությունը կարող է հանդիպել փոքր-ինչ այլ անվանմամբ, քան Նոր կտակարանի զանազան մասերում կամ բարոյագիտական գրվածքներում, օրինակ՝ «քաջություն» և «արիություն», կամ «հեզություն», «չափավորություն», «խոհեմություն», «ժուժկալություն»:

Այս առումով հետաքրքրական է, Եվագր Պոնտացու խորհրդապատական երկերի հայերեն թարգմանությունները, մասնավորապես, այսպես կոչված «Հարիրաւորք վեցերորդք»-ը, որը հունարեն բնագրով մեզ է հասել միայն հատվածաբար, սակայն պահպանվել է հայերեն և ասորերեն թարգմանությամբ: Այդ գրվածքում մանրամասն անդրադարձ կա ոչ միայն առաքինություններին այլև մեղքերին: Առաքինությունները և աղոթքը Եվագր Պոնտացու նախընտրած թեմաներից են, ուստի զարմանալի չէ, որ աղոթքը նրա համար ամենաաստվածային առաքինությունն էր: Իսկ «Աղօթքի մասին» երկի առաջաբանում՝ նա անդրադառնում է և՛ ընդհանուր՝ չորս առաքինություններին և՛ աստվածաբանականներին՝ հույս, հավատ և սեր²: Ըստ Եվագրի. «Ինչպես զգեստն է մարմնի մերկությունը ծածկում, այնպես էլ առաքինությունը՝ հոգու»³: Ուշագրավ է նաև այն փաստը, որ Եվագրի գրվածքները սահմանված են հենց առաքինությունների տեսանկյունից, այսպես «Գիրք պատճառաց»-ում կարդում ենք. «Գիրքնական՝ զտեսական առաքինութիւնսն ասէ, եւ Արդիւնաւոր՝ զգործնական առաքինութիւնն»⁴:

¹ Ի դեպ, այս առաջաբանը (որպես կանոն, առաջաբաններում խոսվում էր նյութի կարևոր կետերի մասին) շատ արժեքավոր է թվերի խորհրդաբանության առումով:

² Վարք սրբոց հարանց եւ քաղաքավարութիւնք նոցին ըստ կրկին թարգմանութեան նախնեաց, հ. Բ, Վենետիկ, 1855, էջ 695:

³ Սրբոյ իօրն Եւագրի Պոնտացոյ վարք եւ մատենագրութիւնք թարգմանեալք ի յունէ ի հայ բարբառ ի հինգերորդ դարու՝ աշխատասիրությամբ եւ ծանոթութեամբք ի լոյս ընծայեաց ի Բարսեղ վ. Սարգիսեան, Վենետիկ, 1907, էջ 189:

⁴ ՄՄ, թիվ 1879, 272բ:

Եվագր Պոնտացու գրվածքներում ներկայացված առաքինությունների համակարգին հատուկ ուշադրություն է դարձնում Սոկրատ Սքոլաստիկոսը: «Եկեղեցական պատմության» Դ գրքի 23-րդ ծավալուն գլխում՝ թվարկելով Եգիպտոսի ճգնավորներին և անդրադառնալով նրանց կենցաղավարությանը և գործունեությանը, Սոկրատ մանրամասնորեն խոսում է նաև առաքինությունների մասին: Սկսելով միայնակյացների կարծիքներից՝ Սոկրատը՝ վկայակոչում է նաև եկեղեցու սուրբ հայրերի ասվածքները, սակայն որպես անցումային օղակ բավականին հանգամանալից մեջբերում է Եվագրի մտորումներն առաքինությունների վերաբերյալ:

«Զայտսիկ Եւագրիոս ի գրեցումս¹ նորա *Գործնականին* յիշեաց, իսկ *Գիտնականին* նորա այսպիսիս ասէ. «Չորս առաքինութիւնսս և տեսութիւն նորա յարդարոյն Գրիգորէ ուսաք լինել. իմաստութիւն եւ արիութիւն, զգաստութիւն եւ արդարութիւն: Եւ արդարութեանն գործ ասէր, լինել զտեսանելն զիմանալիս եւ զսուրբ զգարութիւնն առանց բանից, քանզի այսոցիկ յիմաստութենէ միայն յայտնիլ ասանդեաց: Իսկ արիութիւն, ժուժկալեալ ի ճշմարտութիւնսն եւ ի պատերազմելն, եւ ոչ վարել զրահետ յոչէան: Այլ ի նախկինն արդիւնարարէն ընդունել սերմանիս եւ շտեմարանել զսերմանացունս, իսկ զգաստութեանն առանձին պատասխանեաց լինել: Իսկ արդարութեանն դարձեալ, զոր ըստ արժանաւորութեանն իւրաքանչիւր ումեք բանս բացատրեալ. Է՛ ինչ, զոր ի ձեռն գուշակմանց նշանակեալ, իսկ է՛ ինչ, զոր յայտնեալ յաւգուտ պարզամտացն»²:

¹ Այսպէս յօրինակին:

² **Մ. Տէր-Մովսէսեան**, Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական Պատմութիւն եւ Պատմութիւն վարուց սրբոյն Սիղբեստրոսի Եպիսկոպոսի Հռովմայ, Վաղարշապատ 1897, էջ 342-343. «Սրանց մասին Եվագրը իր «Գործնականն» գրվածքում հիշեց, իսկ իր Գիտնական-ում այսպես է ասում. «Մենք սովորեցինք օրինավոր (արդար) Գրիգորից, որ առաքինություններն ու դրանց տեսությունները չորսն են. իմաստություն եւ արիություն, զգաստություն և արդարություն: Եւ արդարության գործը –ասում էր նա (Եվագրը-Է.Մ.Շ.),- այն է, որ կարողանալ տեսնել իմանալին և սուրբ զորությունն առանց խոսքերի, քանզի դրանք, ասում էր նա, կարող են բացահայտվել միայն իմաստության շնորհիվ: Եւ արիություն է՝ տոկուն մնալ ճշմարտության մեջ (չդավաճանել ճշմարտությանը-

Այս հատվածից հետո Սոկրատ Սքոլաստիկոսն անդրադառնում է Բարսեղ Կեսարացու, իսկ հետո՝ Աթանասի, Սերապիոնի և Դիդիմոսի երկերում առկա առաքինությունների նկարագրմանը:

Բերենք առաքինությունների ևս մի քանի օրինակ վերը հիշատակված «Գիրք պատճառաց»-ից, որտեղ թե՛ քրիստոնեական կամ աստվածաբանական և թե՛ հիմնական առաքինությունները հավասարապես ներկայացված են, օրինակ.

«Եւ դարձեալ նման սոքա չորից առաքինութեանց որով
կերպարանի մարդ պատկեր Աստուծոյ եւ հինգերորդ
զհոգի մեր եւ զմիտս:»¹

Կամ՝ «Սկիզբն ամենայն առաքինութեան է խոնարհութիւնն, որպէս եւ արմատ ամենայն չարեաց ամբարտաւանութիւնն:»

Իսկ «Սկիզբն եւ պատճառ Արարած<որ>ոց², որ եւ Ծնունդք անուանի» նախակրթությունում՝ նշված է, որ աստվածաբանական երեք առաքինություններն ավանդված են Պողոսի կողմից և ներկայացված է դրանց հակիրճ սահմանումը.

«Երրորդութիւն համա{*գ}լար ոչ այժմ եւ եթէ գտեալ
յերկրպագութեան, այլ յաիտենից, յերկինս ի հրեշտակաց
երկրպագեալ եւ ի վերա{*յ} երկրի ի մարդկանէ փառաւորեալ, ի
մարգարէիցն պատուեալ եւ յառաքելոցն քարոզեալ եւ յեկեղեցիս
արդարոց մեծացեալ, վասն որոյ եւ Պաւղոս երիս առաքինութիւնս
ավանդէ. զհաւատ, զյոյս եւ զսէր: Հաւատ ի Հայր՝ յարմատն եւ ի

Է.Մ.Շ.) և անգամ եթե պատերազմում են քո հետ (հարձակվում են քո վրա-Է.Մ.Շ.), չչեղվել դեպի անգոյության արահետը: Եվ առաջին սերմնացանից ընդունել սերմերը և շտեմարանել (պահեստավորել-Է.Մ.Շ.) սերմնացուները, նա համարում է զգաստության արտահայտում (բառացի՝ պատասխանն է «զգաստություն» առաքինության համար-Է.Մ.Շ.): Եվ դարձյալ, արդարությունն այն է, երբ արժանահավատ բացատրություն ես տալիս յուրաքանչյուր բանի վերաբերյալ. (ըստ որում-Է.Մ.Շ.) կան բաներ, որոնք կարելի է հասկանալ միայն գուշակելով, իսկ կան բաներ, որոնք պարզ են և հայտնի ի շահս հասարակ մարդկանց»:

¹ ՄՄ, թիվ 1879, 8ա:

² Անկյունավոր փակագծերում զետեղված <որ> տառերը՝ ավելորդ են:

պատճառն, եւ յոյս յՈրդին, քանզի յուսամք, եթէ տակալին փրկեսցէ զմեզ, իսկ ի Հոգին սուրբ, քանզի պտտու Հոգ[*ւ]ոյն՝ սէր»¹:

Այստեղ ներկայացված Սուրբ Երրորդության անձերի և աստվածաբանական երեք առաքինությունների բաղդատումը՝ Հայր՝ հավատ, Որդի՝ հույս և Սուրբ Հոգի՝ սեր, չափազանց հետաքրքրական է: Քիչ ստորն՝ «Վասն *Եկից* ժողովրդեանն յԵգիպտոսէ տեսութեանն» գլխում առավել մանրամասնորեն պարզաբանված է, թե ի՞նչ է «հավատը»:

«Իսկ զի՞նչ իցեն հաւատքն. իրք է անշաւշափելի, անըմբռնելի, անտեսանելի, անքննելի, անճառելի, լռութեամբ պատուեալ եւ մտաւք միայն երկրպագեալ, քանզի հաւատ ի Հարէ սկսանի, եւ յՈրդի հասանի, եւ ի Հոգին սուրբ վերաբերի»²:

«Պատճառ չորեքտասան[*երորդ] ճառին, որ ի հարիւր եւ ի չորս սաղմոսն»³ գլխում աստվածաբանական առաքինությունը համեմատված է ընդհանուրի հետ.

«Պատեհ համարեցաւ սուրբն Բասիլիոս զայսր սաղմոս ի միտք յառաջինն պատուաստել, զի անդ զսիրոյ ճառեալ ի հաւատս աւարտեաց, զի անդ ասաց. «Միրեցի զի լուիցէ Տէր զձայն աղալթ[*ից]» (Մաղմ. ՃԺԴ 1), եւ աստ ի հաւատոյ սկսանի, վասն զի հաւատն սկիզբն է արդարութեան, որպէս եւ սէրն զաւղ է եւ կատարումն տեսակաց ամենայն առաքինութեան»⁴:

Մասնավոր հետաքրքրություն է ներկայացնում «Գիրք պատճառաց»-ի՝ Հնգամատյանի հեղինակային պատկանելիության վերաբերյալ «Ծննդոց» գրքի նախակրթությունում առկա հատվածը, որում ակնարկվում են միայն չորս ընդհանուր առաքինությունները⁵.

¹ ՄՄ, թիվ 1879, 4բ (I.1.9. -I.1.10., հմմտ. Գաղատ. Ե 22):

² Նույն տեղում, 9բ:

³ Այս վերնագրում սխալ է սպորդել. «ի հարիւր եւ ի չորս»-ի փոխարեն պետք է լինի «ի հարիւր եւ ի տաս չորս», քանզի՝ դատելով բովանդակությունից խոսքը վերաբերում է ՃԺԴ սաղմոսին և Բարսեղ Կեսարացին էլ գրել է ճառ վերջինիս, այլ ոչ թե ՃԴ սաղմոսի համար:

⁴ ՄՄ, թիվ 1879, 253բ:

⁵ Այս հետաքրքրաշարժ հատվածը, որը բացատրում է, թե ինչո՞ւ Մովսեսը չգրեց իր անունը Հնգամատյանի վերնագրում, միայն աշխարհաբար թարգմանությամբ արդեն

«Բայց թէ ընդէ՛ր հինգ գիրս միայն գրեաց Մովսէս եւ ոչ անելի կամ պակաս՝ վասն զի հինգ զգայութիւն: Առաջինն. Ադամայ ապականեցաւ յաղագս պատուիրանին մոռացման՝ ետ ի ձեռն Մովսիսի զհինգ գիրս ի բժշկութիւն, հինգ զգայութեան մերում:

Եւ դարձեալ նման սոքա չորից առաքինութեանց որով կերպարանի մարդ պատկեր Աստուծոյ [Յա] եւ հինգերորդ զհոգի մեր եւ զմիտս: Այլ զի եւ ոչ գրեաց զանունն իւր ի սոցա՝ սովորեն սուրբքն զխոնարհութիւն ցուցանել: Եւ զի յԱստուծոյ անուանեցաւ Մովսէս տանն փարատնի թագոյց զանունն, զի մի՛ յետոյ պաշտան սա նուցուն: Եւ այս եւս, զի ոչ գոյր այլ ոք մարգարէ յառաջ քան զնա, վասն այն եւ ոչ հարկ էր գրել զանունն: Պարտ էր Մովսիսի ըստ տասնբանեան պատգամին եւ ի տասն գիրս գրել, իսկ սա հինգ վասն այնորիկ գրեաց, զի եթող զչորսն անտարանչացն եւ զմինն *Գործոցն սուսբելոց*»¹:

«Գիրք պատճառաց»-ում կան և այլ ուշադրության արժանի հատ-

հրապարակված է (Է. Մ. Շիրինյան, «Ղևտական» գրքի մեկնությունն ըստ «Գիրք Պատճառաց»-ի, Տարեգիրք Դ, ԵՊՀ Աստվածաբանության ֆ-տ, Երևան 2009, 83-84), սակայն քանի որ այն մշտապես քննարկվում է «Հին և Նոր կտակարանների մեկնությունների» դասընթացի ժամանակ և ընդգրկված է քննական հարցաշարի մեջ, որոշեցի մեջբերել այս ուշագրավ պատումի վերջին մասը բնագրի տեսքով՝ հանդերձ աշխարհաբար թարգմանությամբ, քանի որ, ինչպես գիտենք, «Գիրք պատճառաց»-ը դեռևս անտիպ է, ուստի և ուսանողների համար դժվարամատչելի:

¹ ՄՄ, թիվ 1879, 7բ-8ա. «Բայց ինչու՞ Մովսեսը հինգ գիրք միայն գրեց. ոչ ավել կամ պակաս. հինգ զգայարանների պատճառով: Առաջինն. Ադամ ապականեց մեր հինգ զգայարանները պատվիրանի մոռացման պատճառով և Մովսեսի շնորհիվ՝ նրա հինգ գրքով դրանք բուժվեցին: Եվ երկրորդ. չորս առաքինությունների պես, որոնք ստեղծում են մարդու կերպարը, իբրև Աստծո պատկեր և հինգերորդն է մեր հոգին և միտքը: Մովսեսը չգրեց իր անունն այս գրքերի վրա, նաև այն պատճառով, որպեսզի սրբերը սովորեն խոնարհություն ցուցաբերել և նաև Աստծո կողմից անվանված Մովսեսը փրավունի տանը թաքցրեց իր անունը, որպեսզի հետո չմեծարեն (չպատվեն) նրան: Մովսեսը չգրեց իր անունն այս գրքերի վրա, նաև մեկ այլ պատճառով. որովհետև նրանից առաջ չկար և ոչ մի մարգարե, ուստի և հարկ չկար գրելու իր անունը: Թերևս պետք էր, որ Մովսեսը գրեր տասը գիրք ըստ տասնբանյա պատվիրանների, իսկ նա գրեց միայն հինգը, որովհետև թողեց չորսն անտարանիչներին և մեկն էլ Գործոցն Անաքելոց-ի համար»:

վաճներ, որոնցում քննարկվում են առաքինությունները: Այսպես «Յոհաննու Ոսկեբերանի տեսութիւն վասն *Գործոցն Առաքելոցն*» նախակրթություն-մեկնությունում՝ որտեղ «գործք»-ը համեմատելով նշանների հետ, զուգահեռ է տարված նաև «առաքինութիւնք»-ի միջև, ինչը պատահական չէ, քանի որ նման բաղդատում կա նաև հենց «Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» գրվածքում:

Գործք ի մեր փութոյն, եւ յԱստուծոյ ազնութեանցն գործք են՝ հեզ լինել, չափաւոր, սրտմտութեան ժուժկալել, ընդ ցանկութեան մարտնչել, ողորմութիւն առնել եւ մարդասիրութիւն, յամենայնի կրանաւորել առաքինութեամբ: Իսկ գործք եւ առաքինութիւնք՝ նուազք քան զնշանս, այլ պիտանացուք եւ շահաւորք, քանզի աշխատութեանց են հատուցմունք, եւ ուսցի[ս], թէ գործք քան զնշանս առաւել պիտանացու է: Տէր յանուն քո մարգարէացաք եւ դէս հանաք անուամբ քո, եւ զարութիւնս արարաք, եւ ոչ ուրեք առաքինութիւն»¹:

Ուշադրության են արժանի նաև «Գիրք պատճառաց»-ում առկա՝ կրկին Եվագր Պոնտացու անվան հետ կապված առաքինությունները, օրինակ՝ «Սկիզբն եւ պատճառ Եւագրին եւ Նախաշաւիղ, զոր ասէ, թէ *նշանակ յԵզիկէլ*» գլուխը հաղորդում է.

Եւ դարձեալ ի խորհուրդ չորից անտարանացն առ տեղեան այդ են, իսկ այլաբանապէս՝ յորժամ զտեսիլն մեկնես՝ ի չորս առաքինութիւնն տար: Բայց Ե[*]ւագրիոս ի միանձունսն առնու՝ այլաբանելով զտեսիլն, զի զխոհեմութիւն առ ի բարիսն ունիցին, եւ զսրտմտութիւնն ընդդէմ սատանաի, եւ զցանկութիւն՝ երկնից արքայութեանն, եւ զգիտութիւն՝ բարձրաթոյս մտաւք զվերանալ վերինն Երուսաղէմ: Եւ դարձեալ ցուցանէ հերձուածողացն, թէ մարմին մարդոյս չէ պատճառ մեղաց, այլ կամքն, զի եթէ զխոհեմութիւն, զսրտմտութիւն, զցանկութիւն եւ զգիտութիւն բարի ոք ի գործ ածէ մարմնովն՝ ի բարձրագոյսն ամբառնայ նման Պետրոսի²:

¹ ՄՄ, թիվ 1879, 358բ-359ա:

² ՄՄ, թիվ 1879, 272ա:

Այս փոքր ակնարկից իսկ տեսանելի է, թե որքան մեծ հետաքրքրություն են տածել մեր նախնիներն առաքինությունների նկատմամբ: Մեկ անգամ ևս հիշենք Ղուկաս Վանանդեցուն և նկատենք, որ «Յաղագս առաքինութեանց» գրվածքի ընտրությունն «ի ծովու գրոց»՝ սուղ պայմաններում աշխատող Ամստերդամի հայկական տպարանում լույս ընծայելու համար՝ պատահական չէր: Նա իր եղբայրների ու ընկերների հետ, անտարակույս, հասկանում էր այդ ձեռնարկության օգտակարությունը ոչ միայն գիտական տեսանկյունից, այլև հայության բարոյական կերպարն անսասան, հաստատուն պահելու համար:

Մեր այս դարում, երբ արժեքների սրընթաց վերարժևորում է տեղի ունենում, երբ առաքինություններն ու «չարություններն» անգամ կարող են փոխվել տեղերով (օրինակ, հաճախ առաքինության համակարգում դասվող խոհեմությունը կամ համեստությունը հիմա հիմարության է հավասարվում), երբ առաքինությունների մասին չի խոսվում տանը, երբ գրեթե չի դասավանդվում դպրոցներում կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում, երբ գրեթե չեն ստեղծվում «Յաղագս առաքինութեանց» երկի նման աշխատություններ կամ ձեռնարկներ, երբ առանձնապես դրանք չեն կարդացվում (բացի նեղ մասնագետներից)՝ նման բարոյագիտական գրվածքների ուսումնասիրությունը և հրատարակությունները հրամայական են դառնում:

ԱՐԻՍՏՈՏԵԼԻՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ «ՅԱՂԱԳՍ ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆՑ ԵՒ ՉԱՐՈՒԹԵԱՆՑ» ԵՐԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Էռնա Մանեա Շիրինյան

Քանայի բառեր՝ Արիստոտել, առաքինություն, արար, բարոյագիտություն, ուսումնական ձեռնարկ, Հունաբան դպրոց, առաջին հրատարակություն, Ղուկաս Վանանդեցի, Պլատոն, հոգու եռամասնյա կառուցվածքի տեսություն, հայկական աղբյուրներ

Արիստոտելին վերագրվող «Յաղագս առաքինութեանց եւ չարութեանց» փոքրածավալ գրվածքը կազմվել է մ.թ.ա. կամ մ.թ. առաջին դարերում և միջնադարյան ժամանակներից ընդհուպ մինչև 19-րդ դարի վերջ օգտագործվել է որպես բարոյագիտության ձեռնարկ: Այս գրվածքը թարգմանվել է նաև հայերեն՝ Հունաբան դպրոցի ներկայացուցիչների կողմից. այսինքն՝ թարգմանությունը բառացի է, ինչը մեծապես նպաստում է տարընթերցումների ընտրությանը կամ

բնագրի աղճատված հատվածների վերականգնմանը քննական բնագիր պատրաստելիս: Հայոց մատենագրության մեջ «Յաղագս առաքինութեանց» երկը դասվում է, այսպես կոչված, «նուրբ գրեանք»-ի ցանկին: [Արիստոտելի] «Յաղագս առաքինութեանց» հայերեն թարգմանությունը չափազանց տարածված է եղել մեզանում, ինչի մասին վկայում է գրվածքի ձեռագրային հարուստ ավանդույթը՝ պահպանվել է 125-ից ավելի ձեռագրերում և, գրեթե նույնքան գրչագրեր էլ պարունակում են այդ երկի մեկնությունները:

«Յաղագս առաքինութեանց» հայերեն թարգմանության առաջին հրատարակությունը 1704 թ. Ամստերդամում իրականացրել է Ղուկաս Վանանդեցին, որը, խմբագրել է հին հայերեն թարգմանությունը՝ բաղադրելով այն ձեռքին եղած «Յաղագս առաքինութեանց» երկը պարունակող մի հունարեն գրչագրի (կամ հրատարակության) հետ:

Հայկական աղբյուրներում բազում են վկայակոչումները թե՛ ընդհանուր և թե՛ աստվածաբանական առաքինությունների վերաբերյալ, որոնց օրինակները քննարկվում են սույն հոդվածում:

АРМЯНСКИЙ ПЕРЕВОД ТРАКТАТА "О ДОБРОДЕТЕЛЯХ И ПОРОКАХ", ПРИПИСЫВАЕМЫЙ АРИСТОТЕЛЮ

Эрна Манеа Ширинян

Ключевые слова: *Аристотель, добродетель, порок, этика, учебник, Грекофильская школа, первое издание, Гукас Ванандеци, Платон, трехчастное деление души, армянские источники*

Небольшой по объему трактат псевдо-Аристотеля "О добродетелях и пороках" был составлен в первом столетии до н.э. или н.э. и на протяжении веков, вплоть до 19 в., служил для человечества руководством по этике. Перевод трактата был осуществлен представителями Грекофильской школы, что означает, что этот перевод дословный, буквальный; подобный перевод в значительной степени способствует выбору разночтений или восстановлению контаминированных в процессе трансмиссии фрагментов оригинала при подготовке критического издания. В армянской литературе трактат "О добродетелях и пороках" относится к так называемым «тонким письменам». Подобно оригиналу армянский перевод был очень распространен в армянской действительности, о чем свидетельствует богатая рукописная традиция, сохранившаяся более чем в 125 рукописях; почти в стольких же кодексах до нас дошли и толкования на этот труд. Первое издание армянского перевода рассматриваемого трактата было осуществлено в 1704 году, в Амстердаме Гукасом Ванандеци, который отредак-

тировал существующий армянский перевод, сверив его с имеющейся под рукой греческой рукописью (или изданием).

В армянских источниках сохранилось много ссылок и цитат о кардинальных и теологических добродетелях, которые и обсуждаются в данной статье.

ARMENIAN TRANSLATION OF THE WORK ASCRIBED TO ARISTOTLE "ON VIRTUES AND VICES"

Erna Manea Shirinian

Keywords: *Aristotle, virtue, vice, ethics, manual, Hellenizing school, editio princeps, Ghukas Vanadetsi, Plato, tripartite theory of soul, Armenian sources*

"On virtues and vices" (or "De virtutibus et vitiis") ascribed to Aristotle is quite small treatise written in the first centuries B.C or A.D. which served as a manual on ethics for mankind over the centuries. This text was also translated into Armenian by the representatives of the Hellenizing School. i.e. the translation is very literal, which greatly contributes for preparing critical edition while choosing *variae lectiones* and for the restoration of the fragments, contaminated during the transmission. In the Armenian literature this writing is considered among the so-called "subtle writings". The Armenian translation of [Aristotle's] "De virtutibus et vitiis" was very widespread in Armenian milieu; more than 125 manuscripts of the text and almost the same number of manuscripts containing the interpretation on this treatise are a good witness for this statement.

Editio princeps (first edition) of the Armenian translation was made in 1704, in Amsterdam by Gukas Vandandetsi. He compared the existing translation with the Greek original and founded that it is not exactly corresponding with the original; so, he decided to check it with the Greek text (manuscript or edition), which he had at his hands and afterwards he edited some places.

In Armenian sources there are many references to cardinal and theological virtues, examples of which are discussed in this article.